ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2025 թվական, N 12-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 13.12.2024թ. N 1845-Ա, 13.12.2024թ. N 1846-Ա, 16.09.2024թ. N 1359-Ա և 17.10.2024թ. N 1563-Ա և 05.11.2024թ. N 1666-Ա, 04.11.2024թ. N 1654-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 24122024-06-0079, N 28122024-06-0084, N 21012025-06-0034, N 21012025-06-0005 վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Հագվի գյուղ, 1-ին փողոց, 30/2 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 13.12.2024թ. N 1845-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 55.8 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.01671 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-058-0031-0013/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Կամո Ալբերտի Դանիելյանին:
2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 21/4 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 13.12.2024թ. N 1846-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 45.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0041 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0150-0259/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Հայկ Արեստոյի Իսոյանին:

3. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Քարկոփ գյուղ, 1-ին փողոց, 8/1 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 16.09.2024թ. N 1359-Ա և 17.10.2024թ. N 1563-Ա և 05.11.2024թ. N 1666-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 174.0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0133 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-111-0004-0014/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Մարինե Անանունի Բաղդասարյանին:
4. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Օձուն գյուղ, 8-րդ փողոց, 9/13 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 04.11.2024թ. N 1654-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 42.8 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00428 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-112-0036-0046/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Արարատ Ռաֆիկի Միքայելյանին:
5. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			

13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., փետրվարի 13,
Լոռու մարզ, ք. Ալավերդի